

Գալ տարի՝ Վան Պատառիկներ՝ Երազային Արեւմտահայաստանէն «Պտոյտ մը Պոլսոյ Թաղերուն մէջ»

ՎԱՐԴԱԵԱ ԳՈՐՈՒՄԵՆ

Մեր ուխտագնացութեան առաջին օրը այցելած էինք Թոփ Գափըղ պալատը։

Նկատի ունենալով, որ մեր Չարթօսքի գրականութեան եւ պատմութեան գիրքերուն մէջ յաճախ յիշուած է այս պալատին անունը, նպատակայարմար կը գտնեմ քանի մը կարբերութիւն յատկացնել անոր։

Թոփ Գափը պալատը մօտ 400 տարի Օսմանեան Կայսրութեան սուլթաններուն նստատեղին եւ կառավարութեան կեդրոնն էր։ Այժմ թանգարանի վերանուած այս պալատը, տարեկան շուրջ 2.5 միլիոն զբօսաշրջիկներու այցելութիւնը կ'ընդունի։

1453-ին Կոստանդնուպոլսոյ գրաւումէն ետք, Ֆաթիի Սուլթան Մեհմետը մինչ Պայազիտի մօտ յարաբերաբար փոքր պալատի մը մէջ կը բնակեր, սկսաւ Թոփ Գափը պալատի շինութեան (1475 - 1478)։ Յաջորդ սուլթանները շարունակեցին պալատը ընդարձակել եւ գալն վերածել հսկայական շինութեան (700.000 քար. մ., Վասիլյանի տարածքին կրկինը)։ Պալատին սզքբնական անունը «Սարայի ճեփտիէ կմիթե» էր, սակայն քանի որ մայր դրան առջեւ հսկայական թղթանօթը երբ գետեղուած էին (որպէս Թոփ կշան), տեղացիները գայն կը կոչէին «ուփ Գափը»։

Պալատը շինուած է շատ ընդարձակ պարտէզներու շուրջ, ուր բազմատեսակ ծառերու մէջ բազմաթիւ կենդանիներ կ'ապրէին, ինչպէս եղևիկներ, սիրամարգեր, տարաշխարհիկ գունաւոր եւ տեսալաւոր թռչուններ, կապիկներու տեսակներ ու այլ ընտանեցած կենդանիներ։

Պալատի խոհանոցին մէջ շուրջ1200 խոհարարներ եւ օգնականներ կ'աշխատէին, որպէսզի օրական աւելի քան 5000 պաշտօնեաներուն եւ այցելուներուն ճաշերը պատրաստէին։ Օրական 20,000 ճաշ պէտք էր պատրաստուել եւ հրամցուէր պալատականներուն եւ մասնաւոր խոհանոցներու մէջ պէտք էր պատրաստուէին յատուկ ճաշեր՝ սուլթանի ըստանիքին եւ անմիջական գործակիցներուն համար։

Մէկէ աւելի անգամներ պալատի գանազան մասերը երկրաշարժներու եւ հրդեհներու պատճառաւ կործանած էին։ 1574ի մեծ հրդեհէն ետք Սիւսան փաշան վերաշինեց խոհանոցի մասը։ Այս օրերուն խոհանոցի մասը վերածուած է թանգարանի, ուր աշխարհի երրորդ ամենամեծ յարճնապակի - ճենապակիի հաւաքածոն (3000 - 12,000 կտորներէ) ցուցադրութեան դրուած է։

Սուլթան Սուլէյման Զանուկի (օրէնսդիի) ժամանակ, Պայազիտի պալատի հորդեհէն ետք, սուլթանին երկրորդ կնոջ (Ֆրանսաւցի) ճնշումներուն վրայ, Թոփ Գափըղ պալատին մէջ մասնաւոր մաս մը շինուեցաւ սուլթանի ընտանիքին եւ հարեմին համար։ Այդ ժամանակէն սկսեալ սուլթաններու մայրերը եւ «Առաջին Տիկնի»ները սկսան իրենց ժխտական ազդեցութիւնը ունենալ՝ սուլթաններուն եւ կառավարութեան վրայ։

Հարեմի աղջիկները կը հաւաքուէին կայսրութեան գանազան շրջաններէն։ Բնականաբար գեղեցկագոյն աղջիկները կ'ըլլային անոնք։ Որպէսզի իրենց մորթերը աւելի փափկանային եւ «համովային», յաճախ անոնք կ'աթով լուզանք կ'առնէին, իսկ սուլթանին անմիջական սիրելիները՝ էշու կ'աթով...։ Երբեմն հարկիւրաւոր ընտրուած եւ իսլամացած աղջիկները «ամիսներով կարգի կը սպասէին» հարեմին մէջ։ Կըսուի, որ սուլթան Մուրատ 3-րդի հարեմին մէջ 1200 աղջիկներ կային եւ սուլթանը իր ամբողջ ժամանակը հարեմին մէջ կ'անցնէր (երանի իրեն...), կայսրութեան գործերը վեգիրներուն վստահելով (իւրճ Սողումն «իմաստուն»ը միայն 900 հարճ ուներ...)։ Բացի պալատի ընդհանուր մուտքի գինէն, հարեմի մասը այցելելու համար առանձին տոմսակ պէտք էր գնելիքը։ Ջանի մը տողգմով գեղեցիկ այր տոմսակները՝ յուսալով, որ...։ Մտաքն ներս։ Չմայլելի գեղեցկութեամբ շինուած սենեակներ, օրսահներ եւ նշարաններ էին, բայց հարեմի աղջիկները հոն չէին...։ Յուսախաբ դուրս ելանք, սակայն այդ պատճառ չէր, որ մեր երեսակայութեան ուժ չտայինք եւ մենք ալ քանի մը վայրկեանի համար «վայելիքն» այդ հուրիներուն համեցող բուրմունքն ու

երեսակայական, հրեշտակային գեղեցկութիւնները (որքան պիտի ուզէիքք մենք ալ սուլթան ըլլալ գեթ օրուան մը համար...):

Սուլթան Սելիմ 3-րդը հայ «կիւն» մը ուներ հարեմին մէջ, որուն շատ կը սիրեր։ Այդ իսկ պատճառով, ան «Ֆէրման»ով մը յայտարարեց, որ «հայերը պաշտպանուած ժողովուրդ են»։

Հարեմի հարճերը այնքան ալ միամիտ չէին։ Ամէնքն ալ կը փորձէին սուլթանին համար առաջին մանչ գաւակը ծխիլ, քանի որ ան կրնար յաջորդ սուլթանը ըլլալ։ Արցակցութիւնը եւ Էնթրիկները շատ զօրաւոր էին։ Առաջին մանչ գաւակ ծխիլը բաւարար չէր։ Պէտք էր ան ողջ մնար մինչեւ սուլթանին մահը, եւ Մայր սուլթանին օրհնութիւնը վայելէր։ Երբեմն ներքիկներուն (eunuch) հետ դաւադրելով, կը փորձէին իրարու գաւակները սպաննել՝ որպէսզի իրենց գաւակը յաջորդէր սուլթանին։ Սուլթաններուն գաւակները գիրար չէին տեսներ, անոնք երբ 12 տարեկան ըլլային պէտք էր պալատը ձգէին, քանի որ եթէ պէտք ըլլար գիրար սպաննել, կարենային առանց խիղճի իրայթ գործնարել այդ եղբայրասպանութիւնը։

Մայր սուլթանը հարեմին տերն ու տիրակալն էր։ Հարեմի 300 սենեակներուն 40-ը իրն էին։ Հարեմը ուներ 300 սենեակներ (սքանչելիօրէն կահավորուած), 46 օդագարաններ, 8 թրքական բաղնիքներ, 4 խոհանոցներ, 2 մզկիթներ, 6 մասնաւոր, լողազան եւ յատուկ հիւանդանոց։

40 սենամորթ ներքիկներ կը սպասարկէին հարեմի կիներուն։ Ներքիկպետը սուլթանէն եւ Մայր սուլթանէն ետք հարեմին ամենահեղինակաւոր անձն էր ։

Սուլէյմանիէի Մզկիթը

Սուլէյման Մեծաքանչին (Suleyman the Magnificent) մզկիթը շինուած է Սիւսան վաշային կողմէ, 1550- 1557թուականներուն։ Սիւսան փաշան Օսմանեան կայսրութեան ամենանշանաւոր ճարտարապետն էր։ Ան սերած էր Կեսարիոյ մէջ բնակող հայ ընտանիքէ մը։ Սիւսան փաշան (1490 - 1588) կառուցած էր 400-է աւելի ապարանքներ (մզկիթներ, պալատներ, շուկաներ եւայլն)։ 22 տարեկանին ան պալատ եկաւ եւ 19 տարի հոն ծառայելէ ետք, իր ճարտարապետական կարողութիւնները ի յայտ գալով դարձաւ կայսրութեան գլխաւոր ճարտարապետը։ Ան նոյնիսկ Պոլիսէն դուրս մզկիթներ եւ դպրոցներ շինեց (Մեքքայի, Պուտաքեշտի եւ այլ քաղաքներու մէջ)։

Սուլէյմանիէի մզկիթի շինութիւնը տեւեց 7 տարի։ Առաջին երեք տարիներուն 3000 գործաւորներ (մեծ մասը թուրք), գետինը 6-7 մետր փորելով շէնքին հիմքը պատրաստեցին։ Շինութեան ժամանակ 5723 գործաւորներ կ'աշխատէին, որոնցմէ 1713 -ը իսլամ (փորողները եւ քեռակիրները) եւ 3523- ը քրիստոնեայ էին (շինարարները)։ Հալառակ, որ մզկիթին գմբեթը Այա Սոֆիա եկեղեցիի գմբեթէն ցած էր, սակայն մզկիթին ամբողջութիւնը իր ճարտարապետական լուծումներով, գեղեցկութեամբ, ճոխութեամբ, վայելչութեամբ, պերճութեամբ եւ շքեղութեամբ նմանը չունէր Օսմանեան կայսրութեամ մէջ, եւ անկէ ետք ալ ոչ մէկ շինութիւն կրցաւ հաւասարիլ անոր։

Մզկիթին առջեփ պարտեզը (200 x 140 m) 24 գունաւոր եւ գեղեցիկ սիւներով զարդարուած է, որոնց կրակիթէ սիւներուն իւրաքանչիւրը 11 թուն, իսկ մարմարէ սիւները 4 թուն կը կշռեն։ Մզկիթին տեսի կողմը սուլթան Սուլէյմանին եւ իր կնոջ՝ Զիւրեմ սուլթանին թամբանները կան։ «Գերեզմաննոց»ին հիսսիւս-արեմտեան մասին մէջ կայ նաեւ Սիւսան փաշային գերեզմանը, որ ճարտարապետութեան ու գեղեցիկ փորագրութիւններու եւ նկարազարդման գլուխ գործոց մըն է։ Սիւսան փաշային գերեզմանը կարելի է այցելել միայն Ապրիլ 9-ին, իր մահուան տարելիցին։

Մզկիթին շուրջի միայրակ շէքերէն մին «Մետրեւե» (դպրոց) է, կայ նաեւ շուկայի մասը եւ «Դիրեքցիւր Պագարը»-ի շէնքը , ուր ժամանակին հաշիշ ծխողներու համար մասնաւոր սենեակներ կային։ Օսմանցիներուն ժամանակ 800 հոգի կ'աշխատէին այս կառոյցին մէջ։

Սուլէյմանիէ մզկիթը կառուցուած է Զուկարիայէն եկած տուրքերով եւ եկամուտներով։ Մզկիթը ունի 4 միւնարներ, 10 պատշգամներով։ Այս 10 պատշգամները կը յիշեցնեն, որ Սուլէյմանը 10-րդ սուլթանն էր Օսմանեան կայսրութեան։ Մզկիթին 50 մետր բարձրութեամբ 1000 թօս գմբեթը վեր կը պահուէր 4 հսկայական սիւներու վրայ, մին բերուած կիթանսի Պապպէք քաղաքին մէջ գտնուող Չեսի տաճարէն, միւսը Ալեքսանտրիան, հատ մը Պոլսոյ Վեֆա շրջանէն եւ չորրորդն ալ Թոփ Գափը պալատէն։

Բազմաթիւ այլ մզկիթներու կողքին Սիւսան փաշան շինած է նաեւ Շեհզատէ մզկիթը 1543-1548ին, որպէս կոթող Սուլէյման Մեծաքանչին մահացած սիրելի գակնին։ 1561-ին Մեծ վեզիր Ռուստէմ փաշայի հրամանով շինեց իր անունը կրող մզկիթը։ Այս մզկիթը նշանաւոր է իր ներքին ճոխ գեղեցկութեամբ, մանաւանդ շատ գեղեցիկ եւ լաւագոյն որակի գունաւոր սալաքարերով։

Պոլսոյ թաղերու մեր շրջագայութեան ժամանակ բնականաբար մեզի ծանթթացուցին բազմաթիւ այլ մզկիթներու, համեմներու պագարին, Կալթայիի կամուրանը, 375 թուականին հռոմէացի կայսր Վալէնսի կառուցուած «ազուատագոյ»ին (ջրուղի), մզկիթներու վերածուած յուսկանս եկեղեցիներու, 1348ին կառուցուած Կալթայիի աշտարակին, ուրկէ կարելի է տեսնել Վոսիփորը, Ոսկեղնիւրը (Golden Horn)ը եւ Մարմարան։

Իսթիքլալ պողոտան նշանաւոր է իր սրճարաններով, ճաշարաններով, եւրոպական երկիրներու հիւպատոսարաններով, նշանաւոր «Բերա Փայաս Պակթուկ»ով եւ հինէն մնացած «թրամուէ»ի գիծով եւ ելքէտրական կառեցողը։ Իսթիքլալ պողոտայի վերջաւորութեան կը գտնենք Թաքսիմի հրապարակը իր «Յակրապետութեան Յուշարձանի կողթողը (կառուցուած 1928-ին, իտալացի ճարտարապետ Բիէթթօ Զանուիչայի կողմէ), «Աթաթիւրը Մշակութային Կեդրոնի»ով եւ քիչ մը անդին, Ճումիուրիթք պողոտային վրայ «Չիւնուրական Թանգարան»ով։

Վոսիփորի Նեղուցը

Ինչէր չէն գրուած Վոսիփորի մասին։ Այս նեղուցը, որ Եւրոպան կը բաժմէ Ասիայէն եւ Մարմարայի ծովը կը միացնէ Մեւ ծովուն, իր 31.7 քմ. երկարութեամբ եւ 50-է մինչեւ 120 մետր խորութեամբ, շատ երկար պատմութիւն ունի։ Ռուսմիոյ, Պուկվարիոյ, Ուքրաինոյ եւ Ռուսիոյ նաւերը Միջերկրական ծով մտնելու համար պէտք է անցնին Պոսֆորի նեղուցէն։

Ըստ յունական դիցաբանութեան, Չեսս աստուածը իր սիրուկի Խոյին կովու կը վերածէ, որպէսզի իր կնոջ նախանձէն սասուպարէ, սակայն Զեոսն իմանալով մտըղ մը կը դրկէ որպէսզի անհանգստացնէ գայն։ Ի՞նչ ալ այս ջրանցքին մէջ կը մտնէ մծեղնէ ազատելու համար եւ այսպիսով այդ ջրանցքը յունարեւով կը կոչուի «պուս» (կով) «փիօթոս» (դուռ) եւ կ'ունենանք «Վոսիփոր»ը։

Վոսիփորի վրայ առաջին անգամ Տարուրջ նետողը եղաւ Պարսկաստանի Տադիոս կայսրը, ք.ա. 4-րդ դարուն, երբ իր 700,000-ոց բանակը Յունաստանի վրայ պիտի արշաւէր։ Ան նաւակները եւ գերանները իրարու կապելով այդ գործնական կամուրջը կառուցեց։

Արդի ժամանակներու համար առաջին մեծ «Վոսիփորի Կամուրջ»ը շինուեցաւ 1973-ին (կը կոչուի «Աթաթիւրքի Կամուրջ», Թրքաւան Հակարապետութեան 50-ամեակին առիթով), երկրորդը 1988-ին («Ֆաթիի Սուլթան Մեհմետ»ի անունով, Կոստանդնուպոլսոյ գրամիսն 535-րդ տարեադրին առիթով), իսկ հիմա նոր մը եւս կը շինուի։ 2013-ին Նեղուցին տակէն փապուղի (tunnel) մը բանակող Անիան գետնին տակէլ ալ միացաւ Եւրոպային։

Այս օրերուն տարեկան աւելի քան 50,000 բեռնաւոր, ճամբորդատար եւ «սուփոք երկնքը»ներ, ինչպէս նաեւ մեծ զբօսանւոր եւ... ռուսական ռազմաւաւեր կը չափչիփեն Վոսիփորի նեղուցը։

Վոսիփորի նեղուցին ափերուն սքանչելի պալատներ, առանձնատուներ, մզկիթներ, շէնքեր, ճաշարաններ, պանդոկներ եւ այլ

Հարցազրոյց Հայրենի Գիտնական Ռոպերթ Սարգսեանի Հետ

Վարեց ԳԵՈՐԳ ԷԸՕԸԿԿԵՐԵՆԱՆ

Հիւրաբար Լոս Անճելոս կը գտնուի աշխարհահռչակ աստղագետ Վիքթօր Համբարձումեանի աշակերտներէն Ռոպերթ Սարգսեանը։ Ան ծնած է Չանգեզուրի Սիւսեան շրջանի Սալվարդ գիւղը, ուր ստացած է իր նախնական կրթութիւնը, իսկ բաճրագոյն ուսումը ստացած է Երեւանի Պետական Համալսարանի Բնագիտութեան կաճառին մէջ, զոր 1969-ին աւարտելէ ետք, ընդունուած է Բիւրականի աստղադիտարանը, որպէս գիտաշխատող։

Օգտուելով այս պատեհ առիթէն, շահեկան հարցազրոյց մը ունեցանք իր հետ, որ կը ներկայացնենք ընթերցողի ուշադրութեան։

Բարի եկած էք Պրն. Սարգսեան։

Հարցում։ ԻՆչ է ձեր այցելութեան նպատակը։

Պատասխան։ Նախ տեսնել գաւակներս եւ թռնէրս ու կարօսու աննել, ապա այցելել հայկական երկրորդական վարժարաններ ու հանդիպում ունենալ բարձրագոյն դասարաններու աշակերտներուն հետ, որպէսզի գիտութեան խայծով իրահիւրէ գաննել։

Հարցում։ Դուք պատրաստ եւ հետաքրքրական նիւթ մը ունի՞ք մատուցանելու աշակերտներուն։

Պատասխան։ Այո, անշուշտ։ Իմ նիւթը պիտի ըլլայ «Աստղագիտութիւնը երէկ, այսօր եւ վաղը»։ Սա այդ նիւթին համար պատրաստած եմ տեսաներգով (power point) համառօտ դասախօսութիւն մը, որմէ ետք աշակերտներ առիթը պիտի ունենան հարցում հարցնելու։

Հարցում։ Ինչու՞ հետաքրքրուած էք երիտասարդներով։

Պատասխան։ Պարզապէս որպէսզի Վիքթօր Համբարձումեանի գործը շարունակուի։ 1996 թուականի Սեպտեմբերին իր մահով՝ մենք խորիցեացնք, որ Բիւրականի աստղադիտարանն ու անոր հետ առընթեր գիտական ուսումնասիրութիւնները վերջ գտան։ Բարեբախտաբար սակայն ամիս մը չանցած, 40 աշակերտներ Հայաստանէն մասնակցեցան Մոսկուայի Առաջին միջազգային աստղագիտական ողմպիականին եւ հայ մը՝ Իգոր Չիլիգարտեան շահեցաւ առաջին մրցանակը։

Հարցում։ Անշուշտ ուրիշ երկիրներ ալ մասնակցեցան վերոյիշեալ ողմիականին։

Պատասխան։ Բնականաբար, սակայն ոչ մեծ թիւերով։ Օրինակի համար Իտալիայէն կային 10-ը ուսանողներ, իսկ Թուրքիայէն միայն 5։ Ցարդ 23 հայ ուսանողներ տիրացած են առաջնութեան մրցանակին։ Բայց դժբախտաբար անոնցմէ շատերը տարածուած են աշխարհով մէկ եւ մեր նպատակն է գաննքք բերել Հայաստան։

Հարցում։ ԻՆչ յիշատակներ ունիք աշխարհահռչակ աստղագետ Վիքթօր Համբարձումեանէն։

Պատասխան։ Ան մեծ հայրենասէր էր, որովհետեւ թէեւ կ'իշխեր հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ քիչ մըն ալ հնդկերէն լեզուներուն, սակայն միշտ կը գրեր հայերէնով։ Իսկ թէեւ կինը ռուս էր, սակայն տան մէջ իօսանկցական լեզուն միշտ եղած էր հայերէնը, իրենց չորս գաւակներուն հետ։

Հարցում։ Ինչպէ՞ս էր իր յարաբերութիւնը եռնակալիշխատակ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի հետ։

Պատասխան։ Գիտե՞ք ինչ, Վեհափառի ամառնային հանգստարանը Բիւրական կը գտնուէր եւ անոնք սերտ յարաբերութիւն մշակած ըլլալով, յաճախ կը

շինութիւններ իրենց շքեղութեամբ աւելի կը գեղեցկացնէն տեսարանը։ Հարուստ անտառներու կանաչը, նեղուցին պլալացող կապտականաչը, երկինքի կապոյտն ու անպերու ճերմակ զարդարանքները, արեւն շողերուն տակ այնքան ներդաշնակօրէն հիւստած են իրարու, որ կարելի չէ ժամերով դիտելով կշտանալ։ Ըստած է, որ «զինին լազ գինի է, բայց շան տիկի մէջ է»...։

Մեր շրջագայութեան վերջին գիշերը զբօսանաւով գիշերային ընթրիք - պտոյտ մը կատարեցինք Վոսիփորին վրայ։ Չքօսանաւուն ներսը թրքական «շարքի»ներով ճոխ յայտագիր ուլ կար, պորտախաղով, հարսանեկան տեսարաններով, ճիփսիական (քնչու) պարերով, կատակ երգերով։ Իսկ վերը նաւակամուրջին վրայ, մաքուր օդին հետ կը վայելէինք Վոսիփորի գիշերային, գունաւոր լոյսերով ողողուած բլուրներու գեղեցկութիւնը։ Պալատները, մզկիթները (մեծ մասը

հանդիպէին իրարու։ Կըսուի, թէ օր մը հետեւեալ խորիմաստ գրոյցը փոխանակուած է իրարու միջեւ։ Վեհափառի հարցին, թէ իՆչ է մեր նմանութիւնը, Համբարձումեան պատասխանած է՝ երկուքս ալ վեր կը նայինք, սակայն տարբեր բաներ կը տեսնեք...։

Հարցում։ ԻՆչ իրատարակութիւններ հեղինակած էք ցարդ։

Պատասխան։ Ասպարէզիս բերումով իրատարակած եմ 30 գիտական ուսումնասիրութիւնները եւ հինգ գիրքեր, որոնցմէ վերջինը՝ «Վիքթօր Յ. Համբարձումեանի Հետեւորդները» լոյս տեսած է Երեւանի մէջ, 2012ին։

Հարցում։ Հիմա իՆչ աշխատանքով կը զբաղիք։

Պատասխան։ Նախ ըսեմ, որ Հայաստանի Գիւղատնտեսական Համալսարանին պատանող՝ երկրորդական վարժարանի տնօրէնն եմ։ Իսկ 2014ին հիմնուեցաւ Վիքթօր Համբարձումեանի Հետնորդներու Կրթական Բարեգործական Հիմնադրամը, որու վարիչ տնօրէնն եմ։

Հարցում։ ԻՆչ եւ այդ հիմնադրամի նպատակները։

Պատասխան։ Մեծ աստղագետ Վիքթօր Համբարձումեանի ժառանգութիւնը պահպանել եւ զարգացնել, աստղագիտութեան ուսուցումը դարձնել անիրաժէշտութիւն աշխարհի բոլոր հայերուն եւ լայն գանգուածներու համար հետաքրքրութիւն ստեղծել աստղագիտութեան հանդէպ։

Հարցում։ Որո՞նք եւ այդ հիմնադրամի հոգաբարձուները։

Պատասխան։ Աշխարհահռչակ դէմքեր։ Օրինակ մը տալու համար բաւ է յիշել Ե

Սփիւռքահայ Կեանք

«Յաւիտենական Յայաստան. Մեծ Դէմքեր» Ֆրանսերէն Հատորին Ներկայացումը Փարիզի Մէջ

Թեմիս անդրանիկ Առաջնորդը՝ Լորվան Արք. Չաքարեան, ԳԲԸ-ի հովանաւորութեամբ հանդիպումներու շարքի մը ձեռնարկած է, որ տեղի կ'ունենայ Փարիզի Ալեք Մանուկեան մշակութային կեդրոնին մէջ, իւրաքանչիւր ամսուան երկրորդ երեքշաբթի օրը՝ յատուկ թեմայի մը շուրջ:

Յունուար 13-ի հանդիպումը Լորվանու շուրջ տեսած՝ «Յաւիտենական Յայաստան. մեծ դէմքեր» (ՔԱռմոնի անտերնելլե; grandes figures) ֆրանսերէն հատորին ներկայացումն, որուն հեղինակներն են Գրայր Գրաչեան եւ Արա Գրիգորեան, որոնք ներկայ էին երեկոյթին՝ բացատրութիւններ տալու համար իրենց գլուխ հանած գործին մասին, ապա նաեւ զայն անկազմելու:

Սրահը ծայրէ ծայր լեցուցած գրասեր հանրութեան բարի գալստեան խօսքով դիմեց Լորվան Արք., որ արտայայտուեցաւ հայերէն:

Ապա ԳԲԸ-ի վարչութեան կողմէ ներկայները ողջունեց Թովմաս Տիլան:

Երեկոյթը սկսաւ երաժշտական բաժնով մը, որու իրենց մասնակցութիւնը բերին սոփրասո Քրիստինէ Լյոտիենան, դաշնակահար Փաթրիք Ռուբէ, քամակահար ժերար Գարսեան եւ շուրջահար Ֆիլիպ Ընահպագեան, որոնք ներկայացուցին գործեր հայ անուանի այն վարպետներէն, որոնք անունները տեղ գտած են այս հատորին մէջ: Արժանաւոր արուեստագետները աւելի ուշ՝ գիրքին ներկայացման ընդմիջումով մը կրկին բեմ բարձրացան:

Գեղիակներէն Գրայր Գրաչեան

ստանձնած էր սահիկներու ընկերակցութեամբ՝ գիրքին մէջ յիշատակուած մեծ դէմքերէն մի քանին ներկայացնելու առաջնութիւնը: Բայց նախքան այդ, ան հակիրճ կերպով տուաւ հատորին յղացման պատմականը, նաեւ որոշ բացատրութիւններ: Ըսաւ, թէ երբ 2010ին իր պատրաստած «Յայ մշակոյթի 101 դէմքեր» հատորին 1.000 օրինակները շուտով սպառեցան, հարց ծագեցաւ, թէ հատորը նոյնութեամբ պետք է վերահրատարակել, թէ անկէ զեղչել որոշ անուններ եւ զանոնք փոխարինել ուրիշներով: Ի վերջոյ Արա Գրիգորեանի հետ խորհրդակցելէ ետք՝ որոշեցին ոչ մէկը ընել, ոչ ալ միւսը, այլ միասնական խոր, ծաւալուն աշխատասիրութեամբ լոյս ընծայել աւելի ընդարձակ հատոր մը, որու մէջ պիտի ընդգրկուէին, ի տարբերութիւն «Յայ մշակոյթի 101 դէմքեր»ուն, ոչ միայն հայ մշակոյթը դրոշմած մեծեր, այլ նաեւ արքաներ, հրամանատարներ, գիտնականներ, ճարտարապետներ, Յայաստանի անունը պանծացուցած մարզիկներ, եւլն. ու նաեւ օտար 30 անուններ, որոնք պատմական, լեզուամշակութային, մարդասիրական կամ այլ բնագաւառներու մէջ կարեւոր նպաստ ունեցած են Յայութեան: Այսպէս է, որ ծնունդ պիտի առնէր «Յաւիտենական Յայաստան. մեծ դէմքեր» հատորին գաղափարը, որու աւելի քան 260 էջերուն մէջ պիտի խտանային հայ ազգին պատմութիւնը կերտած այդ անունները, այբբենական կարգով: Գ. Գրաչեան համեստաբար դիտել տուաւ, որ իրենց կատարած ընտրութիւնը անխուսափելիօրէն եթեպէս կայանակալ մը ընդունի, եւ թէ բնական է, որ գտնուին

կատարուած «ծաղկաբաղ»ին համամիտ չեղողներ:

Իսկ Արա Գրիգորեան իր խօսքին մէջ յատկապէս ընդգծեց անբեկանելի կամքը հայ գրողներուն, որոնք ամենէն ծանր արհաւիրքներուն իսկ տոկալով շարունակեցին ստեղծագործել եւ գրել, փոխանցեցին իրենց յոյզերը, իրենց ազգին յոյզերը: Ապա յիշեց իր մանկութեան օրերը, երբ մայրը՝ երախայի մը համար քիչ մը ձանձրացուցիչ հետեւողականութեամբ, իրեն գոց սորվեցնել կու տար Սիամանթոյի «Ես երգելով կ'ուզեմ մենախի» բանաստեղծութիւնը, որ այսօր իրեն համար դարձած էր հոմանիշ՝ գողտրիկ յուշի մը, բայց մանաւանդ թանկագին գանձ մը: Ան զգալի յուզումով արտասանեց նահատակ բանաստեղծին սրտաշարժ տողերը:

Որպէս «հիւրընկալող» բնականաբար վերջին խօսքը արտասանողը եղաւ Սիլվա Գրաչեանը:

Այնուհետեւ գրասերներու բազմութիւնը հաւաքուեցաւ այն սեղանին շուրջ, որու վրայ դիզուած էին թարմ մելան բուրդող հատորները, որոնք լոյն առաւտուուն դեռ նոր հասեր էին հեղինակներուն ձեռքը: Անոնք սիրով եւ համբերութեամբ, իւրաքանչիւր փափաքողին համակրական տարբեր բովանդակութիւններով մակագրեցին իրենց արժեքաւոր գործը, անթաքոյց գոհունակութեամբ՝ ի տես ցոյց տրուած մեծ հետաքրքրութեան, որ շատ մը տեսակէտէ ապերախտ այդ աշխատանքին լաւագոյն վարձատրութիւն է անկասկած:

Սթամպուլի Հայկական Թարգմանչաց Վարժարանի Տարածքին Պայթիւն Մը Տեղի Ունեցած Է

Սթամպուլի Օրթաքոյ թաղամասի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցոյ եւ հայկական Թարգմանչաց վարժարանի տարածքին, Յունուար 13-ի առաւտեան պայթիւն մը որոտացած է: Ըստ Emmanuël Habert-ի թղթական Habert3rk լրատուական ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ պայթիւնը տեղի ունեցած է տարածքին մէջ գտնուող կոյուղիի դիտահորին մէջ, որուն հետեւանքով դիտահորի շուրջ 60քկ. կշռող կափարիչը օդ նետուած է:

Պայթիւնի հետեւանքով գոհեր կամ վիրաւորներ չկան, բայց բնակիչները սարսափի եւ խուճափի մատուած են: Դէպքի վայր կանչուած են ոստիկանութեան, ինչպէս նաեւ Սթամպուլի ջրամատակարարման եւ կազմամատակարարման ծառայութիւններու աշխատակիցները:

Վերջիններու կատարած հետազոտութիւններու արդիւնքով կայ այն վարկածը, որ պայթիւնի պատճառ կրնայ ըլլալ կոյուղիի մէջ մեթան կազի կուտակումը: Դէպքին առիթով ոստիկանութիւնը հետաքննութիւն սկսած է:



Մշակութային Արձագանգ

Սերկէյ Խաչատրեան Համերգներով Հանդէս Պիտի Գայ ԱՄՆ-ի Եւ Սպանիոյ Մէջ

Աշխարհահռչակ ջութակահար Սերկէյ Խաչատրեան, ԱՄՆ-ի եւ Սպանիոյ մէջ համերգներ պիտի ունենայ: Այս մասին «Արմենիա» լրատուական գործակալութեան մամուլի սրահին մէջ կայացած ասուլիսի ժամանակ նշեց ճանչցուած ջութակահարը:

«ԱՄՆի Պալմօրի մէջ պետք է տուագնէ: Երեք համերգով Baltimore Symphony նուագախումբին հետ հանդէս կու գամ, յետոյ Սպանիոյ՝ Մատրիտի մէջ, համերգներ կ'ունենամ: Սիլվա Գրաչեանի ջութակի համերգը պիտի կատարեմ», նշեց Սերկէյ Խաչատրեան:

Baltimore Symphony նուագախումբի պաշտօնական՝ bso.org կայքէն կը տեղեկանանք, որ Սերկէյ Խաչատրեանի

մասնակցութեամբ համերգները տեղի կ'ունենան Յունուար 29ին, 30ին եւ 31ին: ocne.mcu.es-ը կ'աւելցնէ, որ Սպանիոյ մէջ կայանալիք համերգները տեղի կ'ունենան Փետրուար 26ին, 27ին եւ 28ին:

Աշխարհահռչակ ջութակահար Սերկէյ Խաչատրեան կը բնակի Գերմանիոյ մէջ: Ջութակ նուագել սկսած է վեց տարեկանին՝ փորձէտոր Պետրոս Հայկազեանի օժտ: Յետագային ուսումը կը շարունակէ Վիւրցպուրկ քաղաքին մէջ: 9 տարեկանին իրաջատրեան առաջին անգամ հանդէս կու գայ սիմֆոնիկ նուագախումբի հետ որպէս մենակատար: Փոքր տարիքէն մենահամերգներով եւ որպէս մենակատար՝ սիմֆոնիկ նուագախումբերու հետ հանդէս եկած է



աշխարհի շուրջ 50 երկիրներու մէջ: Որպէս կանոն տարեկան 1-1.5 համերգով հանդէս կու գայ Հայաստանի մէջ: Սերկէյ Խաչատրեան 2013 թուականին ստացած է զուիցերիական Credit Swiss դրամատան ամենամեայ մրցանակը՝ որպէս «Աշխարհի լաւագոյն երիտասարդ երաժիշտ»:

Երկար Սպասուած «Անահիտ» Մանկական Շարժանկարը Արդէն Հասանելի Է Համացանցի Վրայ

Մէկ տարի առաջ պատահաբար բարձրացաւ՝ Ղազարոս Աղայեանի հեղինակութիւնը: Դա իր անկախ արտադրութեամբ «Անահիտ» ֆիլմը: «Ռուպերթ Սահակեանց փրոտաքշըն» արուեստանոցին 5 տարի պահանջեց՝ ստեղծելու համար հայկական առաջին լիամետրաժ անիմացիոն երաժշտական ֆիլմը: Լախագիծին աշակցած են Մշակոյթի նախարարութիւնն ու Շարժ Դոկտրինը: yerevan.today-ի փոխանցմամբ՝ Յունուար 14-ին տեղի ունեցաւ «Անահիտ»

մանկական շարժանկարի առցանց առաջին ցուցադրութիւնը՝ հաճելի անակնկալ մատուցելով փոքրերուն եւ ոչ միայն անոնց: Շարժանկարը ստեղծուած է անանդական նկարչական արուեստագիտութեամբ եւ եռաչափ գծագրութեան կիրառմամբ (3D): Պահպանուած է հեղինակի հիմնական միտքը՝ համերգատար ու բանիմաց գեղեցկուհի Անահիտը Վաչագան թագաւորին արհեստը գնահատել կը սորվեցնէ: Ի վերջոյ արքան միայն այն



մարդը չէ, որ կը թագաւորէ, այլ այն, որ արարել ու կառուցել գիտէ: Ու նաեւ սիրել:

Սուրիահայ Օրագիր

Սուրիահայերը Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդարանին Մէջ Տոնեցին Հին Նոր Տարին



Արարատեան հայրապետական թեմի (ԱԹԹ) առաջնորդարանին մէջ՝ Յունուար 14-ին, Հայաստանի սուրիահայերը ԱԹԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Ս. Նաւասարդ արքեպիսկոպոս Կոնյեանի օրհնութեամբ՝ տօնեցին Հին Նոր տարին: ԱԹԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Ս. Նաւասարդ արքեպիսկոպոս Կոնյեան շնորհակալութիւնով սուրիահայ համայնքի ներկայացուցիչները՝ մարտի, որ 2016 թուականը ըլլայ խաղաղութեան ու յաջողութիւններու տարի:

NEWS.am-ի հետ զրոյցի ընթացքին, Սուրիոյ Հալէպ քաղաքէն պատերազմի պատճառով 2 տարի առաջ ընտանիքին հետ Հայաստան եկած Չարուհի Համալեան նշեց, որ այսօրուան ձեռնարկը առիթ է Հայաստանի սուրիահայերուն մէկ տեղի մէջ համախումբելու, սուրիահայ երախաներուն ուրախացնելու համար: «Հալէպի մէջ մեր սովորոյթներով ճոխ սեղաններով, հարազատներու հետ կը տօնէիք Ամանորն ու Սուրբ ծնունդը: Կաղանկի ծառ, մսոր, հաւատքով, յոյսով Տիրոջ կը կամենայինք, որ ամէն տեսակ առողջութիւն ու յաջողութիւն տայ մեզի:

Բայց մեր քաղաքի տաղանակներու պատճառով բոլորս գաղթեցինք ու այստեղ մեզի սրտաբաց ընդունեցին: Այսօր ալ ուզեցինք, որ սուրիահայերով այստեղ հաւաքուինք, նշենք մեր Կաղանկը: Լաւ ենք, ուրախ ենք, հանգիստ ենք, բայց երանի թէ Սուրիոյ մէջ պայմանները լաւ ըլլան ու մենք մեր տունները վերադառնանք», ըսաւ Չարուհի Համալեան: Ձեռնարկի ընթացքին սուրիահայ երախաներուն Կաղանկ պապան տուրներ բաժնեց:

Նշեց, որ արդէն քանի մը տարիէ Հայաստան վերադարձած սուրիահայերը, ԱԹԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Ս. Նաւասարդ արքեպիսկոպոս Կոնյեանի օրհնութեամբ՝ իրենց Նոր համայնքը ձեւաւորած են Արարատեան Հայրապետական թեմի Չորատար Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Անոնք իրենց համայնքային սովորութիւնները կը պահպանեն՝ նշելով բոլոր տօները, մասնակցելով ուխտագնացութիւններու եւ յատուկ իրենց համար կազմակերպուող արեւմտահայերէն քարոզներու:

Հայ Կաթողիկէ Համայնքի Բերիոյ Թեմի Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան Ս. Պատարագ Մատուցեց Հայ Ծերանոցի Նորաբաց Մատրան Մէջ



Կիրակի, 10 Յունուար 2016-ին, Հայ Ծերանոցի նորաբաց Մատրան մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ, ուր հանդիսապետեցնեց եւ պատարագեց Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան, Առաջնորդ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց: Այս մասին կը յայտնէ Perio News.

Հայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ ժողովրդապետութեան կողմէ կազմակերպուած Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց «Ալեմշահ» երգչախումբը:

Ս. Պատարագին կը մասնակցէր Տեր Կոմիտաս Զահանայ Տատարլեան: Պատարագին ներկայ էին Հայ Ծերանոցի համակալութեան եւ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի անդամներ, Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ բոլոր յանձնախումբերը եւ հոծ բազմութիւն մը հաւատացեալ ժողովուրդէն:

Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան իր քարոզին մէջ մակարանական ներկայացուց Յիսուս մանուկի ծննդեան խորհուրդը: Պատարագէն ետք Տեր Կոմիտաս Զահանայ Տատարլեան Սուրբ հաղորդութիւն բաշխեց անկողիկի ծառայող բոլոր պատուարեալներուն:

հրամցուցին ծեր-պատուարեալներուն: Ճաշէն ետք սարքուեցաւ Սիրոյ սեղան, ուր ներկայ եղան Արհի. Գերապայծառ Տերը, հոգեշնորհ հայր սուրբը, արժանապատի քահանայ հայրեր, Հայ Ծերանոցի համակալութեան եւ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի անդամներ, Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ բոլոր յանձնախումբերը եւ Ծերանոցի տօները:

Ճաշի ընթացքին արտասանուեցան սիրոյ խօսքեր, Հայ Ծերանոցի համակալութեան ատենապետուհի Աննա Տեր Յակոբեանի, Արք. Տ. Կոմիտաս Զին, Տատարլեանի, Տօրնէն Աօ Գաթրճեանի կողմէ ու ընթացքին մերթ ընդ մերթ կատարուեցան մեներգեր: Ճաշի աւարտին Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան իր սի թոյ խօսքը արտասանեց, ուր իր գնահատանքով եւ բաշխելու խօսքերով բարձր գնահատեց Հայ Ծերանոցի համակալութեան, Տօրնէնի եւ պաշտօնութեան աշխատանքները, ինչպէս նաեւ ընդգծեց, որ Հալէպի մէջ երեք Համայնքապետերը կը գործեն մէկ սիրտ եւ մէկ հոգի հասկացողութեամբ ծառայելու մեր ազգին:

Ճաշէն ետք ներկայները Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի գլխաւորութեամբ շրջեցան սենեակ առ սենեակ: Գերապայծառ Տերը պատուարեալներուն տուրներ բաշխեց, տեղեակ եղաւ իրաւիճակով, ինչպէս նաեւ Ամանորի եւ Ս. Ծնունդի առթիւ փոխանցեց իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնը:

Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ ժողովրդապետութեան անդամներէն ոմանք վերոնշեալ իրագործումէն անկախ, իրենց սրտաբան խորհատութիւնները կատարեցին Հայ Ծերանոցին:

Կեսօրին Ս. Սիրոյ Յիսուսի Տիկնանց Սիրութեամբ Հայ Ծերանոցի Տիկնանց օժանդակ յանձնախումբին հետ միասին, օր մը առաջ պատրաստած ճաշը սիրել:

Մարզական

Սպանիոյ Քոփա ՏԷԼ Ռեյի 1/8-րդ Հանգրուանի Դարձ Արձեթիքո Մատրիտը Եւ Վալենսիան Ապահովեցին Իրենց Տոմսերը



Սպանիոյ բաժակի մրցաշարի Քոփա ՏԷԼ Ռեյի վերջին տասնվեցի հանգրուանի դարձի մրցումներու երրորդ օրը Մատրիտի «Արձեթիքո»ն յաղթեց իր համաբաղաբաջի «Ռաջո Վալենսիա»ին եւ հասաւ բառորդ անարտական հանգրուան: Իսկ «Վալենսիա»ն դարձեալ յաղթեց «Կրանատա»ին ու ապահովեց վերջին ութի հանգրուանի իր տոմսը: Ստորեւ տեսնել այս հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

- Կրանատա - Վալենսիա 0-3, երթ. 0-4
- կոլեր. Ռ. Չահիյա 42, Փաջօ Ալքասեր 63, Փ. Փիաթի տուգ. 84,
- Արձեթիքո Մատրիտ - Ռաջո Վալենսիա 3-0, երթ. 1-1
- կոլեր. Ա. Զորրեա 40, Ա. Կրիզման 80, 90+1,

Փորթուկալի Բաժակի Զառորդ Աւարտական Փորթոն Եւ Սիորթինկ Պրական Յաղթեցին

- Փիլ Վիտերթե (Բ. Դաս.) - Նասիոնալ 1-0
- Ռիօ Ավե - Եսթրիլ 3-0
- Սիորթինկ Պրակա - Արուքա 2-0
- կոլեր. Գուկո Պասթօ սխալ. 57, Ս. Սթրիլիլիքովիչ 60,
- Պրակաթա - Փորթօ 0-1, կոլ. Ե. Պրահիմի 26,

Կայէ Անտոնեանը Կը Յառաջդիմէ



Ըստ «Ֆրանս Ֆութբոլ» մարզական պարբերականին, Հայաստանի հաւաքականի եւ երկրորդ դասակարգի «Տիժն» խումբի պաշտպան Կայէ Անտոնեանի խաղը մեծ բարելաւում կ'արձանագրէ: 20-ամեայ ֆութբոլիստը «Նիոր» խումբին դեմ մրցումին նշանակած է երկու կոլ եւ խումբը փրկած է վտանգաւոր յարձակումներէ: Ան ընտրուած է 20-րդ հանգրուանի ամենալաւ ֆութբոլիստ: Անտոնեանի համաձայնագիրը «Օլիմպիք Մարսեյ»ի հետ կ'աւարտի 2018 թուականի ամրան: Ան ներկայիս «Տիժն»ին մաս կը կազմէ փոխատուութեամբ:

Ռեալ Մատրիտը Եւ Արձեթիքոն Պատժուեցան

Մինչեւ 18 տարեկան մարզիկներ իրենց կազմերուն միացնելու ընթացքին արձանագրուած խախտումներու համար ՖԻՖԱ-ն պատժած է սպանական «Ռեալ Մատրիտ» եւ «Արձեթիքո Մատրիտ» ակումբները: Անոնք զրկուած են յաջորդ երկու նոր մարզիկներ ընդգրկելու շրջանին նոր ֆութբոլիստներ միացնելէ իրենց շարքերուն: Երկու խումբերը միայն 2017 թուականի ամրան կրնան նոր մարզիկներու հետ համաձայնագիր ստորագրել: Հարկ է նշել թէ Նոյնպիսի պատիժ կրած էր նաեւ «Պարսելոնա»ն մէկ տարի առաջ:

Շաբաթավերջի Մրցումներու Յայտագիրը

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

ՇԱԲԱԹ 16 Յունուար 2016

- ՍՊԱՆԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
 Ժամը 17:00 Սելտիա (7) - Մալպա (10)
 Ժամը 19:15 Չելթա ՏԷ Վիլո (5) - Լեանթ (20)
 Ժամը 21:30 Վիլյարեալ (4) - Ռեալ Պեթիս (15)
 Ժամը 23:00 Ռեալ Սոսիտատ (14) - Տեփորթիլո Լա Զորուկա (9)
ԱՆԳԼԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:45 Թորթըմըմ Հոգիլը (4) - Սանտըրլէստ (18)
 Ժամը 17:00 Չելսի (14) - Էվըրթըն (11)
 Ժամը 17:00 Մանչեսթըր Սիթի (3) - Զրիսթըլ Փալաս (8)
 Ժամը 19:30 Ասթըն Վիլլա (20) - Լեյքըրը Սիթի (2)
ԻՏԱԼԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Աթալանթա Պերկամօ (11) - Ինթեր Միլան (3)
 Ժամը 21:45 Նափոլի (1) - Սասուոլօ (6)
ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 18:00 Թուլուզ (18) - Փարի ՍԷՆ Տերմեն (1)
 Ժամը 21:00 Կենկան (19) - Նանթ (10)
ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 20:30 Մարիթիմօ (10) - Ունիաօ Մատեյրա (15)
 Ժամը 22:45 Եսթրիլ (1) - Պենֆիլքա (2)
ԱՄԻՐԱՆԻ ՄԻՆԻՍԵՐ 23 ՏԱՐԵՎԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 15:30 Թայլէստ (3) - Ծաթն (1), - Եմեն (4) - Հար. Զորրեա (2)

Ժամը 18:30 Հիւս. Զորրեա (4) - Սեուտ. Արաբ. (2), - Իրաք (1) - Իզրայէլ (3)
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՏԵԹՊՈՒԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Ռիատի Պէյրուֆ (2) - ՀՍԸՍ Պէյրուֆ (1) Մանարայի Ռիատիի մարզ.
ՃԱՊՈՆԻՅԱՆ ՄԱՐԶԱԶԵՏԵՐՈՒ ԱՆԵԱՐՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ
 Ժամը 10:00-Էն սկսեալ eurosport 1 կայանէն:
 Ժամը 11:30-Էն սկսեալ eurosport 2 կայանէն:

ԿԻՐԱԿԻ 17 Յունուար 2016

- ԼԻԲԱՆԱՆԻ Գ. ՂԱՍԱՎԱՐԳԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
 Ժամը 14:15 Ալի Սարպա (1) - ՀՍՍ (6), Ժունիի քաղաք. մարզ.
ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ՂԱՍԱՎԱՐԳԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:15 ՀՍՍ Մասիս - Ալ Ռայա, Ալ Ահլիի մարզ.
ՍՊԱՆԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 13:00 Վալենսիա (11) - Ռաջո Վալենսիա (19)
 Ժամը 17:00 Ռեալ Մատրիտ (3) - Սիորթինկ Իսիտն (18)
 Ժամը 19:15 Լաս Փալմաս (16) - Արձեթիքո Մատրիտ (1)
 Ժամը 21:30 Պարսելոնա (2) - Արձեթիքո Պիլյասօ (8)
ԱՆԳԼԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Լիվըրպոլ (9) - Մանչեսթըր Եունայթըտ (6)
 Ժամը 18:15 Սթըր Սիթի (7) - Արսենալ (1)
ԻՏԱԼԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Ուտինետե (12) - Եուվենթիս (2)
 Ժամը 21:45 Միլան (8) - Ֆիորենթինա (4)
ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 15:00 Լորիան (9) - Մոնպօ (3)
 Ժամը 18:00 Զայէ (5) - Օլիմպիք Մարսեյ (11)
 Ժամը 22:00 Սենթ Էթիեն (7) - Օլիմպիք Լիոն (6)
ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 20:15 Նասիոնալ (13) - Սիորթինկ Պրակա (4)
 Ժամը 22:30 Վիթորիա Կիմարայէ (8) - Փորթօ (3)
ՀՈՒՍՏՈՆԻԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 13:30 Էյ Տի Օ ՏԷՆ Հաակ (10) - Այաքս Ամսթերտամ (1)
 Ժամը 15:30 Ֆեյենուրտ Ռոբըրտամ (3) - Փի Ես Վի Այնտհովըն (2)
ՍԿՈՎԻՅԱ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:15 Ռոս Զաուրի (5) - Էպըրտին (2)
ԱՄԻՐԱՆԻ ՄԻՆԻՍԵՐ 23 ՏԱՐԵՎԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 15:30 Վիթթեմ (4) - Աւստրալիա (3)
 Ժամը 18:30 Արաբ. Միաց. Էմիր. (2) - Յորդանան (1),
ՖՈՒԹԲՈՒԼԻ ԲԱՐԵՎԱՍՏԱՎԱՆ ՄՐՑՈՒՄ
 Ժամը 20:30 Լիբանան - Իրաք, Ալ Սատ ակումբի մարզ.
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՏԵԹՊՈՒԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 16:00 Հիքմէ (7) - Պիպլոս (6), Ղազիրի մարզ.
ՃԱՊՈՆԻՅԱՆ ՄԱՐԶԱԶԵՏԵՐՈՒ ԱՆԵԱՐՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ
 Ժամը 17:00-Էն սկսեալ eurosport 1 կայանէն:
 Ժամը 18:30-Էն սկսեալ eurosport 2 կայանէն:

Պասքեթպոլ Լիբանանի Ախոյեանութիւն

Թատամնը Կրեց Առաջին Պարտութիւնը



Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան 4-րդ հանգրուանի առաջին մրցումին «Հուլիս»ը իր դաշտին՝ Միշէլ Մըր մարզադաշտին վրայ ընդունեց պարտութիւն չունեցող Չուքի «Թատամն»ը եւ տարաւ իր առաջին յաղթանակը 75-55 հաշիւով: «Հուլիս»ի ամենալաւ նշանակողներն էին Ալի Մըզհիըրը՝ 22 կետ եւ ամբողջացի Անթուէյն Պարպուրը՝ 21 կետ, իսկ «Թատամն»ի ամենալաւ նշանակողն էր սերպ Պրանքօ Սվիթըրովիչը՝ 22 կետ:

Ճատրակ Հայաստանի Ախոյեանութիւն

Անդրիասեանը Եւ Գեորգեանը Առաջատարներ

Երեւանի Ճատրակի Տան մէջ սկսած Հայաստանի տղոց 76-րդ ախոյեանութեան 3-րդ հանգրուանին Չաւեն Անդրիասեանը յաղթեց եւ դարձաւ առաջատար, մինչ միւս վարպետները հաւասարութիւն արձանագրեցին: Ստորեւ տեսնել դասաւորումը 3 հանգրուան ետք.

1-Չաւեն Անդրիասեան	2.5 կետ
2-Արման Փաշիկեան	2 կետ
3-Ռոպերթ Յովհաննիսեան	2 կետ

Իսկ կիներու 71-րդ ախոյեանութեան երեք հանգրուան ետք ամենալաւ արդիւնքը արձանագրած է Մարիա Գեորգեանը: Ան տարած է երեք յաղթանակներ: Երրորդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Սոնա Ասատրեան - Արփինէ Գրիգորեան 0.5-0.5
- Սուսաննա Կապոյեան - Արմինէ Պապայեան 1-0
- Մարիա Գեորգեան - Աննա Սարգսեան 1-0

Մրցաշարքին կը մասնակցին 10 կիւ վարպետներ, որոնց շարքին ախոյեան Սուսաննա Կապոյեանը: Ստորեւ տեսնել դասաւորումը 3 հանգրուան ետք.

1-Մարիա Գեորգեան	3 կետ
2-Սուսաննա Կապոյեան	2 կետ
3-Արփինէ Գրիգորեան	2 կետ

Արձեթիքոյ Ժամհուրի Առաջին Մրցում

60 Մեթրի Պատանիներու Մրցակիշ

«Ժամհուր» ակումբը կազմակերպեց արձեթիքոյ մրցաշարը մը ֆետերատիւնի հովանաւորութեամբ եւ հինգ ակումբներու մասնակցութեամբ: Այդ մրցումներուն 60 մեթր վազքի տղոց մրցումին «Ժամհուր» ակումբէն Ռալֆ Ուարդը արձանագրեց պատանիներու դասակարգի նոր մրցակիշ՝ 7.25 երկվայրկեան:

AGBU ISTITUTO italiano di CULTURA

Հ.Բ.Ը.Մ. Լիբանանի
համազործակցութեամբ

Իտալական Մշակոյթի Կեդրոնին
Վենետիկեան Փառատօններուն առիթով

կը Ներկայացնէ

Պարօք Խումբը

Արուեստագէտներ՝
Ճիաննա Ֆրաթթա, *դաշնակ*
Տինօ Տէ Փալմա, *ջութակ*
Թերեզա Տի Պարի, *սփրանօ*

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 23 Յունուար, 2016 երեկոյեան
ճիշդ ժամը 8 ին,
Հ.Բ.Ը.Մ. Տեմիրճեան Կեդրոնէն ներս, Անթիլիաս

Ձեր ներկայութիւնը հաստատելու համար հաճեցէք
հեռաձայնել 04522842/3 թիւերուն.

Հրաւեր

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱԿ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ազգային Բարերարներ Ազա Գրիգոր եւ Ազա Կարապետ Մեղգոնեաններու յիշատակին

Կիրակի, 17 Յունուար 2016, Ումէյի Ս. Յարութիւն Եկեղեցի

ՄԿԴ Լիբանանի Սանուց Միութիւն

ՄԱՅԱԶԴ

Տիկին Արշալոյս Վարդանեան եւ զաւակը՝ Թորոս Տէր եւ Տիկին Երուանդ Վարդանեան եւ զաւակուրդ Տէր եւ Տիկին Վաչէ Վարդանեան եւ զաւակուրդ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Կարինէ Պալապանեան Տէր եւ Տիկին Կարօ Վարդանեան եւ զաւակուրդ Տէր եւ Տիկին Կիրակոս Վարդանեան եւ զաւակուրդ Տէր եւ Տիկին Միւր Վարդանեան եւ զաւակուրդ (Գանատա) Խաչիկ եւ Սիրուն Վարդանեաններ եւ համայն Վարդանեան, Թորոսեան, Մուլլաճեան, Պալապանեան, Տէր Գեորգեան եւ Վարդան ընտանիքներ ու ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ (ծնեալ՝ 1947)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 15 Յունուար 2016-ին: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 16 Յունուար 2016-ին կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Ատանայի Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ Պուրճ Համուտ, ուրկէ հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազօ:

Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան եկեղեցոյ սրահին մէջ մինչեւ երեկոյեան ժամը 7:00, իսկ Կիրակի, 17 Յունուարին կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00 նոյն վայրին մէջ:

Հոգեհանգիստ

Որք. Վարդանուշ Պոզոյեանի մահուան քառասունեան առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 17 Յունուար 2016-ին, Պուրճ Համուտի Սրբոց Զատանից Մանկանց Եկեղեցոյ մէջ յաւարտ Սուրբ պատարագի:

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտի վրիպակներու պարագային, կ'ապաւինենք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: